
ՈՒԹՄԱՄԵՂԵՂԱՅԻՆ ԳԱԳԱԹԸ ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ ԿԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր քնարական ստեղծագործություն բնորոշվում է որոշակի ժանրային, ոճական առանձնահատկություններով, և նրա հնչողությունն էլ պայմանավորված է ոիթմով ու չափով: Սակայն, ինչպես Մ. Աբեղյանն է նշում, «Եթզ արտասանում ենք մի ոտանավոր, նախ այն նկատի ունենք, որ արտասանումը համեմատ լինի **մտքին...**»: Առանց այն էլ «գրությունը խոսվածքի նկատմամբ հաճախ անկատար է»¹: Չափածո ստեղծագործությունը ոիթմամեղեղայնության և իմաստային արտահայտության դաշնակն է միաժամանակ: Նրա ընկալունք, ինչպես նաև վերարտադրումը պետք է համապատասխանեն հեղինակի հաղորդակցական նպատակներին:

Պոետի, երգահանի համար լսողական տարերքը, անշուշտ, առաջնային է մնում: Նրանք ասեն «ընդունիչ» են, «բախտավոր ընթերցող», որ ի վերուստ լսում են իրենց «հասցեագրված» մեղեղին:

Պոեզիան և երաժշտությունը ստեղծվում են ոչ թե աչքի, այլ ականջի համար: Այսպես՝ գերմանացի լեզվաբան էդ. Սիվերսը «տեսողության բանասիրությանը» (Augenphilologie) վճռականորեն հակադրում էր «լսողության բանասիրությունը» (Ohrenphilologie): Վերջինս հատկապես էական է բանաստեղծական խոսքի վերլուծության համար. հնչյուններն այստեղ ոչ թե ինքնաբերաբար ուղեկցում են իմաստը, այլ իրենք են երբեմն ձեռք բերում գեղագիտական իմաստ²: Պոեզիան ծագել է երաժշտությունից. ինչպես վկայում է Վ. Մայակովսկու ինքնահաշվետվության փորձը, բանաստեղծությունն ամենակին էլ բառերն իրար կացնելով չի գոյանում. նրա սկիզբն ու հիմքը նույն այն «գվիոց-աղմուկն» է, որի միջից հետո միայն դուրս են ենում բառերը³: Նույնաննան է և Շիլլերի ինքնազգացողությունը. «Եթզ ես նստում էի բանաստեղծություն գրելու, նրա երաժշտական կողմն ավելի հաճախ էր «հնչում» իմ հոգում, քան նրա բովանդակության մասին պարզ պատերազումը...»⁴: Է. Արայանն էլ, մտորելով վերպարվեստ – երաժշտություն – բանաստեղծություն եռանդամի շուրջ, հաստատում է Ուստույն այն միտքը, թե երաժշտությունն է ծագել խոսքի հնչերանգից. «Պոեզիային նա (երաժշտությունը – Ա. Մ.) հաղորդում է կշռույթի (չափի) այդ երաժշտական ինքնակարգապահությունը, ինչպես նաև պոետական երաժշտականության մյուս հատկությունները»⁵:

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Եր., 1933, էջ 22:

² Տես «Դնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», Եր., 1978, էջ 64-65:

³ Տես Մայկովսկի Վ. Բ. Կակ делать стихи // Մայկովսկի Վ. Բ. Сочинения в одном томе. М., 1941:

⁴ Ժիրմունսկի Վ. Մ. Թեория литеаրтуры. Поэтика. Стилистика. Л., 1977.

⁵ Է. Արայան. Հոգի և ազատություն, Եր., 2005, էջ 39:

Հ. Թումանյանի քառյակների ու նրանց ռուսերեն թարգմանությունների հիման վրա փորձենք վեր հանել հնչերանգի հիմնահարցին վերաբերող որոշ տաղաչափական երևույթներ:

Ա. ՈՒԹԲԱՄԵՂԵԴԱՅԻՆ ԳԱԳԱՔ ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպէս նշվում է մասնագիտական գրականության մեջ, հնչերանգը բարդ, խրբին, միևնույն ժամանակ և համալիր հիմնահարց ⁶: Տարբեր մասնագետներ այն բաղադրում են զանազան տարրերից: Ըստ Ս. Ղուկասյանի՝ «Յուրաքանչյուր լեզվի համակարգը սերտորեն կապված է այդ լեզվի շարահյուսական առանձնահատկությունների հետ: Եվ քանի որ առանց հնչերանգի չկա հնչադասություն⁷ (ֆրազ), ուստի հնչերանգի առաջին և հիմնական շարահյուսական գործառույթը **հնչադասականությունն** է լեզվական տարբեր միավորների կապակցումը հնչյունական իմաստային և հաղորդակցային մեկ միավորի մեջ: Երկրորդը **շարահյուսական իմաստատարբերակիչ** գործառույթն է, երբ միևնույն շարահյուսական կառույցում հնչերանգի որևէ բաղադրիչի կամ բաղադրիչների փոփոխությամբ հնարավոր է արտահայտել հաղորդակցային տարբեր իմաստներ՝ հարցում, հաստատում, բացականչություն: Հնչերանգի ամենաէական բաղադրիչը հիմնական տոնն է (մեղեդին և նրա ծայնատիրույթները):»: Այդիսով, «առանց խոսքային հնչերանգի բացառվում է անմիջական ամեն մի հաղորդակցում»⁸:

Լեզվաբանները պարզաբանում են հնչերանգը՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա) Բաղադրիչների քանակը. բոլորն ընդունում են **հիմնական տոնի** ուժգնացումն ու տևողությունը, մասնակի է, սակայն, **տեմրիի**, **դադարի**, **ռիթմի**, **շեշտի** հանդեպ վերաբերնումը⁹:

բ) Ուսումնասիրության տարբեր նպատակադրումները. լեզվաբանները տարակարծիք են **հնչերանգի տեսակների ձևավորման և տարբերակման հարցերում**. հիմնականում ուշադրություն են դարձնում **մեղեդու փոփոխությամբ**¹⁰:

գ) Հնչերանգի գործառույթների ընտրությունը. առանձնացվում են երկուսը՝ **բերականական և զգացական**¹¹, որի հիմքում ընկած են մարդու հոգական

⁶ Տես **Николаева Т. М.** Интонация сложного предложения в славянских языках. М., 1969, էջ 10-14:

⁷ «Հնչադասություն» եզրը հայագիտության մեջ առաջին անգամ օգտագործել է գ. Զահովյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» գրքում (Եր., 1974, էջ 79):

⁸ Ս. Ղուկասյան, Հնչերանգ // Հայկական սովետական համրագիտարան, հ. 6, Եր., 1980, էջ 496:

⁹ Տես «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում»:

¹⁰ Ի դեմս Ֆայկի՝ ամերիկյան լեզվաբաններն արտասանվածքը բաժանում են չորս մակարդակի (գերբարձր, բարձր, միջին և ցածր), իսկ Շ. Բոլինչերը, համակարծիք լինելով բրիտանացի հնչյունաբանների հետ, հնչերանգը հետազոտում է ըստ ամբողջական հաղորդաշղթաների (տոնի շարժման ուղղությունը շարույթի վերջում և դրանց տարբերակներն ըստ ծայնատիրությի): Դա արվում է համաշխարհային հաղորդակցման լեզուն՝ անգերենը, համրամատչելի դարձնելու համար: Ոուս գիտնականները հակված են հնչերանգի տեսակների դասակարգմանը, կառույցի և հնչերանգի հարաբերակցնանը:

¹¹ Ա. Ոեֆորնատսկին դասակարգել է հնչերանգային գործառույթները. 1. նույն շարադաստերյան դեպքում նախադասության՝ պատմողականի, բացականչականի կամ հարցականի վերածվելը, 2. երանցավորումների արտահայտումը տոնի բարձրության, հաճախականության և տեմպի տեղաշարժմանը, 3. դադարների տեղադրումը, նրանց աստիճանը, 4. դադարների միջոցով բարդ և պարզ նախադասությունների զանազա-

այն դրսնորումները, որոնք ուղեկցում են խոսքը և արտահայտում խոսողի զանազան հոգեվիճակները՝ ունենալով նաև սուբյեկտիվ երանգավորում¹²:

Մ. Արեւյանը գտնում է, որ մարդկային խոսքը, լինի խոսակցական լեզու, արձակ կամ չափածո գրվածք, բնորոշվում է ռիթմային հատկությամբ, ուստի և տաղաչափական ուսումնասիրության ժամանակ վերջինիս համար ելակետային է լեզվի՝ որպես այդպիսինի ռիթմիկան և երաժշտականությունը: «Կընշանակե՛ տաղաչափության խնդիրը այն չէ միայն, թե ինչպես է առաջ գալիս երաժշտական ռիթմը լեզվի մեջ..., այլ նաև թե որչափ կարելի է երաժշտական ռիթմ առաջ բերել ընդհանրապես լեզվի և մասնավորապես մի առանձին լեզվի միջոցներով»: Ապա եզրահանգում է. «Տաղաչափությունը... լեզվական ուսումնասիրություն է»¹³: Նման տեսակետի պաշտպանն է և ուսու գրականագետ Վ. Ե. Խոլշանիկովը՝ պնդելով, որ բանաստեղծական հնչերանգն ստեղծվում է շարահյուսական, բառապաշտության և չափական գործոնների փոխազդեցությամբ միայն¹⁴: Իսկ Ո. Պապայանն էլ գտնում է, որ բանաստեղծական խոսքի հնչերանգային առանձնահատկություններն առաջին հերթին կապված են չափական կազմակերպվածության հետ և դրա շնորհիվ կարող են դիտվել լեզվաբանականից տարրերվող առանձին հիմնահայոց¹⁵:

Քերականական գործառույթի կարևոր դրսնորումներից է հնչաշարությունների առանձնացումը՝ դադարների՝ հնչման ընդհատման կամ էլ հիմնական տոնի կտրուկ փոփոխմամբ¹⁶:

Յայ լեզվաբանության մեջ չկա հնչադասային ամպանվող շեշտի առանձին ընթանում. այն ընկալվում է իբրև իմաստային շեշտ, որը նույնական հստակորեն չի սահմանազատվում և փոխարինվում է տրամաբանական շեշտ հասկացությամբ¹⁷: Այն նախադասության մեջ որևէ բառի ընդգծումն է նախադասության մյուս բառերի համեմատությամբ, որով իմաստային որոշ երանգավորում է տրվում նախադասությանը: Տրամաբանական շեշտի տեղադրումը պայմանավորված է հաղորդակցական նպատակներով: Կոչականների, հարցման, բացականչության, հրաման արտահայտող բառերի շուրջն են ծավալվում մյուս, առավել ցածր ձայնելականությունները:

Ըստ մեզ՝ ցանկացած չափածո ստեղծագործության մեղեդայնությունը կառուցվում է իմաստային շեշտի շուրջ: Դնչողության տեսակետից

նումը, 5. տենակի արագությամբ և բնականոն հնչյունային ալիքի անկումով միջանկյալ բառերի առանձնացումը, 6. նախադասության որևէ տարրի առանձնացումը հնչադասական, այսինքն՝ տրամաբանական շեշտի գործածությամբ (տես՝ **Реформатский А. А.**, Введение в языковедение. М., 2007, էջ 37):

¹² Ըստ Ա. Ռեֆորմատսկու՝ երոիկիշալ քերականական գործառույթներին չի առնչվում այն երևույթը, որն արտահայտում է մարդկային տարրեր հոլյզեր՝ ուրախություն, վլորվմնելը: Դնչերանգում ներառվում է նի քամի տարր, այդ թվում՝ ըմբիամուր տեմբրը, ծայմային տեմբրը (մոայլ, վախվորված, զարմացած, ուրախ և այլն, տես՝ **Реформатский А. А.**, նշվ. աշխ., էջ 191):

¹³ **Մ. Արեւյան**, Յայոց լեզվի տաղաչափություն, էջ 15-16:

¹⁴ Տես՝ **Холшевников В. Е.** Типы интонации русского классического стиха // Слово и образ. М., 1964, էջ 27:

¹⁵ Տես՝ **Папаян Р. А.** Сравнительная типология национального стиха (русский и армянский стих). Еր., 1980, էջ 22:

¹⁶ Տես՝ **Ռ. Թոխմախյան**, ժամանակակից հայերենի շեշտարանությունը, Եր., 1983, էջ 159:

¹⁷ Տես՝ նույն տեղը, էջ 160:

տրամաբանական շեշտակիրը մեղեդային պատկերի **գագաթն** է (կուլմինացիան)։ **ռիթմամեղեդային գագաթով** էլ առանձնանում է հեղինակի կողմից հաստուկ նշանավորված, իմաստային արժեքը ունեցող այս կամ այն միավորը։ Վերջինիս ընկալումն օժանդակում է չափածո ստեղծագործության ուսումնասիրության և դրա վերարտադրության՝ արտասանության, վերլուծության, նեկանարանման, այդ թվում և թարգմանության քննության ժամանակ։ Թումանյանական քառյակների և նրանց ռուսերեն թարգմանությունների ուսումնասիրությունը վկայում է, որ չափածո տեքստի յուրատիպ հնչողությունն ապահովլում են նաև տաղաչափական այլ երևույթներ, որոնց «զորեղ» ազդեցությունը հնչերանգի վրա անժխտելի է։

Բ. Տաղաչափական որոշ երևույթներ բնագրում և թարգմանություններում։

1. Քառյակ-նախադասություն հարաբերություն և նրանով պայմանավորված դադարները։

Ասույթի ձևավորման համար կարևոր են նախադասությունների քանակը, նրանց փոխադարձ հարաբերությունները, իսկ չափածոյում՝ նաև նրանց տեղաբաշխումը տողերում։ Տեքստի այս իմաստակազմիչ տարրերը ներազդում են նրա հնչերանգի՝ առաջին հերթին դադարի և տևողության վրա։ Այսպես, երբ բանաստեղծն «ընտրում է» **մեկ ստորոգում ունեցող նախադասություն**, ակնկալում է սահուն, թեկուզ փոքր դադարներով, սակայն մեկ հիմնական շերտով հնչերանգ։ Իսկ երբ նա կառուցում է բարդ նախադասություն, ապա մեկ տեքստի սահմաններում միավորում է տարբեր տեսակի և բնույթի, թագմապիսի փոխհարաբերությամբ **մի քանի հնչադասություններ**, որոնցից յուրաքանչյուրը, ունենալով իր հնչադասական շեշտը, պայմանավորում է նախադասության ոչ միալար հնչերանգը։ Նշված երկու կառուցները տարբերվում են **ռիթմամեղեդային գագաթներով**։ Դամենատենք հետևյալ տեքստերը¹⁸։

Երկու դարի արանքում,

Меж двумя веками я,

Երկու քարի արանքում,

—————
Меж двумя камнями я,

Դոգմել եմ նոր ընկերի

—————
Ու իին ցավի արանքում:

—————
Все мечусь меж новым днем

—————
И былыми днями я.

(թարգմ. Կ. Լիպսկերով)

Уста́л метаться меж двумя мирами,

—————
Как между мельничными жерновами,

Между моими новыми друзьями,

И прежними великими царями. (թարգմ. Ն. Գրեբնկ)¹⁹

¹⁸ Ասվածն ավելի ակնառու ներկայացնելու համար դիմել ենք երաժշտագիտության մեջ ընդունված գրառման ձևերին՝ ձայնի՝ դեպի ուժգնացում գնացող, և հակառակը՝ ուժգնացումից դեպի մարում գնացող։

¹⁹ Մեջբերումներն ըստ **Ա. Մարտիրոսյան**, Հովհաննես Թումանյանի քառյակները, Չետվերության Օվաննես Տումանյան. Եր., 2006։

Կ. Լիպսկերովը շեշտի տակ է դրել դարեր, քարեր և ես բառերը, այլ ոչ
թե հոգմել եմ ստորոգյալը (ի դեպ, այն իր իմաստային նշանակությանը
հնչում է այլ քայլակում՝ «Առատ, անհատ՝ Աստծու նման միշտ տեղալուց
հոգմել եմ ես...»): Ն. Գրեբնար պահպանել է հնչագագաթը շրջուն շարա-
դասությամբ՝ քայլակի սկզբում:

Բարդ նախադասության կառուցման դեպքում մեկ տեքստի սահման-
ներում միավորվում են տարրեր տեսակի և բնույթի փոխհարաբերությանը
հնչադասություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր շեշտը, դրանցից
վեր էլ կա հիմնական ռիթմամեղեղային գագաթը:

Իհարկե, թե՛ պարզ, թե՛ բարդ նախադասությունները մտքի արտա-
հայտման, հաղորդակցման նվազագույն միավորներ են, բնորոշվում են որ-
պես իմաստային և հնչյունային տեսակետից ավարտուն շարահյուսական
կառույցներ: Գ. Լ. Գարեգինյանը այսպես է տարրերակում պարզ և բարդ
նախադասությունները. «Բարդ նախադասությունը, պարզի համեմատու-
թյամբ, քերականական ավելի բարձր վերացության արդյունք է, մտածողու-
թյան ու դատողության զարգացման մի նոր աստիճանի լեզվական արտա-
հայտություն»²⁰: Նա հաստատում է, որ բարդ նախադասությունը պարզ նա-
խադասությունների մեխանիկական գումարը չէ, այլ նախադասությունների
այնպիսի շարահյուսական կապակցություն, որի մեջ նրանք զրկվում են նա-
խադասության բնորոշ հատկանիշներից, իմաստային, հնչերանգային ինք-
նուրույնությունից²¹: Բարդ նախադասությունը, սակայն, ներառելով և միա-
վորելով մեկից ավելի պարզ նախադասություններ, մեկ ավարտված միտք է
արտահայտում և ծևավորվում է մեկ ավարտահնչերանգով, ծայնի տոնի՝
մտքի ավարտն ակնարկող յուրահատուկ իջեցմանբ: Այս բնութագիրը, ի
դեպ, ինչպես նշում է Գ. Գարեգինյանը, ընդհանուր է թե՛ հայերենի և թե՛ ռու-
սերենի համար²²: Այսպիսով՝ բարդ համադասական նախադասության մեջ
ներառված պարզ նախադասություններից մեկի հնչերանգային «կենտրո-
նը» դառնում է ողջ նախադասության ռիթմամեղեղային գագաթը:

Եթե պարզ նախադասություններն ինքնուրույն են, ունեն իրենց ա-
վարտահնչերանգը, ապա միավորվելով բարդի մեջ՝ կորցնում են այդ
հատկությունը: Ավարտահնչերանգի կորստի հետ մեկտեղ նվազում է այդ
պարզ նախադասության ստորոգյալի կամ որևէ այլ՝ հեղինակի կողմից
կարևորված անդամի առաջնայնությունը:

Սոտորև ներկայացվող քայլակում շեշտվում է իմաստային առումով ամե-
նակարևոր ստորոգյալը: Հարկ է նշել, որ առօգանության նշաններ կրող բառե-
րը հնչաշարույթում արդեն իսկ առանձնանում են յուրահատուկ ուժգնությամբ:

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարի իր ձեռքին,

Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կըրկին.

Ե՞յ, անխելք մարդ, Ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,

Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհը շեն ու լի:

²⁰ Գ. Գարեգինյան, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991, էջ 3-4:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 8:

²² Ղնմտ նաև՝ Վալգինա Հ. Ս., Ռոզենտալ Դ. Է., Փոմինա Մ. Ի., Պապուկևիչ Վ. Վ.
Սինտակսի. Մ., 1973, էջ 5:

Свободен день, вольна любовь, и всем добром владеет он,
Но мучает и страждёт он, и сам ***несчастьем поражен.***

Так сделай, злобный человек, чтобы живые жить могли,
И сам живи, вкушая мир обильной, благостной земли.

(քարգմ՝ Կ. Լիպսկերով)

Коль есть свобода и любовь, нужны ль иные блага?

Чего же ты ищешь; и без мук не ступишь ты и шага?

Глупец, когда настанет час, чтоб ты не мучась мог

Взять все, чем мы одарены пусть на ненадолгий срок?

(քարգմ՝ Ս. Կարմենյան)

Свободный во времени, вольный в любви, щедро всем одаренный.

Он ждет, скорбит, ***недовольный*** всегда и всегда удрученный.

Безумный! Когда же позволишь ты другим быть довольным жизнью?"

Когда же ты сам будешь жить, красотой упоенный?

(քարգմ՝ Ա. Կովեբյակին)

Բնագրում բացահայտվում է «մարդու կրկին դժբախտ լինելը»: Այն նաև 1-ին, 2-րդ և 3-րդ, 4-րդ տողերի մտքերը կապող օղակն է: Ըստ հեղինակի՝ մարդը դժբախտ է, որովհետև անընդիատ որոնում է, տանջվում, տանջում, և վերջապես դժբախտ է, որովհետև չի ապրում «սըրտալի» և վայելում «Ես աշխարհը շեն ու լի»: Կարմենյանի թարգմանական տեքստում այս ստորոգյալը, չգիտես ինչու, դարձել է հարցական: Բայց Լիպսկերովը ոչ միայն պահպանել է, այլև շեշտադրել՝ նույնությամբ տեղադրելով այն համապատասխան դիրքում: Կովեբյակինի տարբերակում առկա են մի քանի ստորոգյալներ, ինչև արբար շեշտերն ել շատ են, սակայն ինաստային առումով կարելի է ասել՝ հաղորդումն իրականացել է:

Լեզվում բարդ և պարզ նախադասությունների համար, ի թիվս այլ առանձնահատկությունների, գոյություն ունեն կամնակարգված հնչերանգներ: Նախադասության տեսակները բազմաթիվ են՝ պարզ (համառոտ, ընդդարձակ, այդ թվում՝ դերբայական դարձվածով), բարդ (համադասական, ստորադասական, բազմաբարդ): Բնականաբար, բոլորն ել ունեն տարբեր հնչողություն, տարբեր հնչերանգային պատկերներ:

Այն հանգամանքը, թե նախադասության կառուցվածքային որ տիպերն են ավելի հաճախական, նույնպես նշանակալից է թումանյանական տեքստի հնչողության առումով: Ըստ մեր հաշվումների՝ քառյակներում գերակշռող են բարդ համադասական նախադասությունները: Պարզ համառոտ նախադասություններ բնագիր տեքստերում թիշ են հանդիպում, բացառությանք իինք քառյակների (№ 2 «Անց կացա՞ն...», № 3 «Վերջացա՞վ...», № 4 «Ո՞ւ կորա՞ն...», № 8 «Ե՞տ եկե՞ք...», № 50 «Ե՞տ չեկա՞վ...»), որոնց առաջին տողերը պարզ համառոտ են, ընդ որում՝ գեղչված ենթակայով: Թարգմանված քայլակների հիմնական մասին բնորոշ է մեկ քայլակ – մեկ նախադասություն պատկերը: Թարգմանական տարբերակներում նախադասությունների քանակը և կառուցվածքային տիպերը ճշգրտողեն չեն վերարտադրված. պարզը բարդացվել է, համադասականը վերածվել է ստորադասականի և այլն:

№ 3 «Վերջացա՞վ...»

Все, что светом считалось, давно отмелькало...

(թարգմ Ն. Գրեբնկ)

2. Տող-նախադասություն հարաբերությունը և նրանով պայմանավորված դադարները:

Չափածոյի հնչողության համար «բախտորոշ» է նախադասության և բանաստեղծության տողի սահմանների համընկելը կամ չհամընկելը: Գյոյլրյուն ունի բանաստեղծական տողի ավարտն ազդարարող հատուկ հնչերանգ և դադար: Ոիթմային կառուցումից բացի՝ գործում է նաև լեզվականը: Երբեմն այս երկու «տարբերքները» համահունչ են, երբեմն էլ՝ ոչ: Նախադասության և տողի եզրերի բացարձակ համընկումը հնարավոր է, բայց խիստ հազվադեպ: Այս համընկման խախտումները մենք բաժանել ենք սկզբունքորեն տարբեր երկու խմբերի:

ա) Նախադասությունը, սկսվելով տողի սկզբում, ծավալվում է և ավարտվում հաջորդ տողի (կամ տողերի) վերջում:

Հիմնականում նման ձևով են կառուցված թումանյանի քառյակները:

Իմ սո՞ւր, արթուն ականջում

Мой чуткий слух в ночи не спит.

Մի խոր ձեն է միշտ հնչում:

Глубокий голос ему звучит.

(թարգմ Կ. Լիպսկերով)

Где б ни был, что б ни делал, – постоянно

Мне слышится какой-то голос странный, –

(թարգմ Ն. Գրեբնկ)

В остром и чутком слухе моем

Голос глубокий слышится вечно.

(թարգմ Ա. Կուլեբյակին)

բ) *Մեկ տողում սկսված հնչադասությունը տողադարձվում է մյուս տող՝ վերջնային դադարով:*

Դա տողանցն է՝ անժարեմենը²³, որին բնորոշ է մեկ տողում սկսված հնչադասության տողադարձը մյուս տող՝ կառուցվածքային վերջնային դադարով²⁴:

Յավոտ աշխարհըն եկավ լրցվեց բովանդակ
Ին սիրտը բաց, ին սիրտը մեծ մեր դարուն:

Боль всех сердец в одну соединилась
И на меня легла в наш трудный век.

(թարգմ. Ն. Գրեբնև)

Այս յուրատեսակ շարահյուսական-տաղաչափական երևույթը գոյանում է երկու տարաբնույթ դադարների չհամընկնելուց: Մեկը գլխավորապես մտքից, բովանդակությունից կախված դադարն է, երբ, ինչպես ձևակերպում է Մ. Աբեղյանը, «որտեղ մտքի մի որոշ հատված վերջանում է, այնտեղ առաջ է գալիս դադար, հնյուններով չլցված մի ժամանակամաս»²⁵, իսկ մյուսը տողի ավարտով պայմանավորված դադարն է: Այլ խոսքով՝ տողանցը տողում հնչադասական անդամատման և չափական անդամատման չհամընկնելը²⁶: Այսպես՝ հնչերանգի բաղադրիչը՝ դադարը, նման տեքստերում դառնում է հնչակերտ:

Մի հավք զարկի ես մի օր,
Թռավ, գնաց վիրավոր:

Однажды я выстрелил в птицу, – и вот
Я раненой птицы увидел полет.

(թարգմ. Կ. Լիպսկերով)

Երազումը մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի.

Снилось мне: овца домой
Принесла вопрос немой.

(թարգմ. Ա. Սահրայան)

Աշնան ամպին ու զամպին
Մոլոր նըստած իր ճըմբին...

Сел жаворонок; он в упор
Глядит на мой размытый путь.

(թարգմ. Օ. Ռումեր)

²³ Տողանցը ֆրանսիական մոդեռնիստական պոեզիային բնորոշ երևույթ է (ֆր.՝ «քայլանցում»), հանդիպում է նաև եզրույթի այլ տարբերակով՝ սինաֆիա (հուն.՝ «առնչակից, հարլան») (տես Стариченок В. Д. Большой лингвистический словарь. Ростов-на-Дону, 2008, էջ 543): Քայերենի տաղաչափական տեսության մեջ եզրը մտցրել է Մ. Աբեղյանը՝ նաև ներկայացնելով հայերեն տաղաչափական նմուշներ (տես Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 148-150):

²⁴ Տես Կվյատկովսկի Ա. Տ. Пoэтический словарь. М., 1966, էջ 206-209:

²⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 145:

²⁶ Ըստ Ա. Կվյատկովսկու և Ա. Կարպովի՝ գոյություն ունի տողանցի երեք տեսակ՝ տողի, բանաստեղծական տաճ և վաճի (տես Կарпов А. Словарь литературоведческих терминов. М., 1974, էջ 16), և բոլորն էլ հեղինակային գգացականության մատնանշման և արտահայտման միջոցներ են, որ բանաստեղծական խոսքը դարձնում են ոչ սովորական, դադարներով, հատու (Վ. Մայակովսկին, Ե. Չարենցը, Մ. Ցվետական սանդուղքի ձևով են շարադրել որոշ ստեղծագործություններ՝ ավելի ընդգծելու առանձին տողում գտնվող բառերը և կտրության ոիթմը):

Թումանյանի ոճը գրեթե բացառում է բանաստեղծական կառուցման նման ձևերը: Յեղինակն ինքը, խոսելով քայլակների արարման դրդապատճառների, ժամանակաշրջանի, ժամրի, ինչպես նաև թեմատիկայի ընտրության, փիլիսոփայական ուղղվածության մասին, նաև պարտադրել է ճշշտ ընթերցել՝ հանգիստ, ընդգծումով: Իր քայլակներում նա մշակել է կրկնությունների²⁷, ինչպես նաև տարբեր երկարության փոքր դադարմերի համակարգեր՝ վարպետորեն խաղարկելով միջակետի, բութի և ստորակետի դերերի զանազանումը: Թումանյանը տեքստի հիմնական ասելիքն առաջին գիծ մղելու նպատակով չի տրոհում, օրինակ՝ ստորադասական շաղկապը, կամ որևէ բարի իմաստայնությունը շեշտում է առոգանության նշանների միջոցով:

... Թախտում են պաղ ու խորհում

Թե՛ ի՞նչ տարան աշխարհից:

Ի՞նչ ես թըռչում, խև-դև սի՛րտ,

Հազար բանի ետև, սի՛րտ...

Ետ եկե՛ք...

Գարնան վարար գետ եկե՛ք...

Չհավակնելով տաղաչափական ամբողջական նկարագիր տալու՝ այստեղ կանգ առանք մի քանի այնպիսի երևույթների վրա, որոնք ակնառու են, խստորեն ապահովում են տեքստային յուրահատուկ հնչողությունը, միևնույն ժամանակ և օբյեկտիվորեն կարող են պահպանվել վերատեղծվող տեքստում՝ անկախ տարբեր լեզուների հնարավորություններից և չափական օրինակարգություններից:

Կ. Ի. Չուկովսկին իրավացիորեն գտնում է. «Յիրավի ճշգրիտ կարող է լինել միայն այն բանաստեղծական թարգմանությունը, որի մեջ իմաստից, ոճից, բնորոշ հնչյունաբանությունից, ռիթմիկայից զատ՝ մատուցվում է նաև բնագրի հնչերանգային յուրահատկությունը: Եթե դա բացակայում է, թարգմանությունը դատապարտված է. թարգմանության մյուս սխալները երբեմն կարելի է շուկել, բայց այդ մեկը ենթակա չէ ոչ մի տեսակ շտկումների»²⁸: Նրա ընկալմամբ՝ «խոսքի հնչերանգը նրա իսկ զգացմունքայնությունն է, նրա հոգին»²⁹: Ըստ Թումանյանի՝ թարգմանչի հիմնական խնդիրը «քնագրի հարազատ բույրն ու իրապույրը» այլ լեզվի միջոցներով վերարտադրելն է՝ այն գորգակցելով արտահայտության բնականոնության, ազատության և մատչելիության հետ³⁰: «Չէ՛ որ բանաստեղծության թարգմանությունը, են էլ

²⁷ L. Տիմոֆեև Աշում է, որ առանձին հնչյունների կրկնությունը կապակցում է այդ կրկնությունները պարունակող բառերը և առանձնացնում դրանք խոսքային հոգի մեջ՝ ուշադրությունը հրավիրելով դեպի իրենց, քանի որ շեշտված են արտասանվում և ծեռք են բերում որոշակի հնչերանգային նշանակություն (տես Տիմոֆեև Լ. Словарь литературоведческих терминов. М., 1974, էջ 88):

²⁸ К. И. Чуковский Собрание сочинений в шести томах. Т. III. М., 1966, с. 437.

²⁹ Նույն տեղում, էջ 426:

³⁰ Տես Յ. Թումանյան, Ելժ տասը հատորով, հ. 2, Եր., 1990, էջ 580:

առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժար ու հազվագյուտ բան է: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՝ ձևը կտեսնես, բայց բուրնունքը չես զգալ: Ինչքա՞ն շնորհը է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրնունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՞ն սեր...»³¹:

Նույնացնելով Թումանյանի հիշատակած «ձևը» քառյակ-կառուցի հետ՝ համարձակվում ենք ասել, որ «բուրնունքն» էլ հնչերանգն է՝ այս չափածո փոքրածավալ գործերի սավանող հոգին:

АРМИНЭ МАРТИРОСЯН – *Ритмомелодическая кульминация в процессе поэтической коммуникации.* – Четверостишия Ованеса Туманяна и их переводы на русский язык рассматриваются в статье с точки зрения предложенной автором ритмомелодической кульминации. Поскольку интонация – явление комплексное, были выделены такие конструкции, чья связь с интонацией не вызывает сомнений. Ритмомелодическая кульминация представляет собой логическое или смысловое ударение, а также важнейший интонационный компонент, выражающий коммуникативные цели автора. Под этим ракурсом и рассмотрены четверостишия Туманяна и русские их переводы, а кроме того, сопоставлены между собой такие синтаксические конструкции, как предложение-четверостишие, предложение-строка и обусловленные ими паузы (в особенности анжамбеманы), важные для звучания поэтических произведений. Такого рода явления присущи также другим языкам и, следовательно, могут быть адекватно воспроизведены при переводе. Поэтому интонационная эквивалентность с точки зрения ритмомелодической кульминации предложена как дополнительный критерий адекватного перевода.

ARMINE MARTIROSYAN – *Rhythmic Tunefulness Peak in the Process of Poetical Communication.* – In the present article H. Toumalyan's quatrains and their Russian translations based on "rhythmic tunefulness peak" suggested by the author are discussed. The "rhythmic tunefulness peak" is the logical or semantic stress which is an important component or timber manifestations of the author's communicative aims. Analyzing Toumalyan's quatrains from this point of view we have singled out such phenomena as quatrain-sentence, line-sentence and stops accounted by them the perception of which is important in phono-semantic sense. These phenomena are inherent in other languages as well and, hence, can adequately be reproduced in translation. We suggest a new criterion of analyzing poetic verses and finding their translation equivalence. This criterion is phonetic / timbre equivalence according to rhythmic tunefulness peaks.

³¹ Նույն տեղում, էջ 152: